Համայնքներում արդար առողջապահության զարգացման ծրագիր

Լոս Անջելեսի Շրջանի համար

2024-2029

Last Rev: 09/11/2024
(Armenian)

Ի՞նչ է Համայնքներում արդար առողջապահության զարգացման ծրագիրը (CHEIP)

Սա Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության (Հանրային Առողջություն), գործընկերների և շահագրգիռ կողմերի համատեղ ծրագիրն է՝ բարելավելու առողջապահության մեջ արդարությունը և խթանելու առողջ, բարգավաճող համայնքների զարգացումը:

Իր զարգացման ընթացքում Հանրային Առողջության Վարչությունը սերտորեն համագործակցել է համայնքներից գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ՝ վերանայելու հասանելի ամենաթարմ տվյալները և բացահայտելու այն ռազմավարությունները, որոնք միասին կազդեն Լոս Անջելեսի Շրջանի հանրային առողջության ամենահրատապ խնդիրների վրա:

Համայնքներում արդար առողջապահության զարգացման այս ծրագիրը (CHEIP) անդրադառնում է բնակչության առողջական այն խնդիրներին, որոնք շարունակում են մնալ բարձր առաջնահերթություն, և շեշտում է գործընկերության և ջանքերի համադրման կարևորությունը՝ հավասարության հասնելու և առողջությունը հավաքականորեն խթանելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Սևամորթների / աֆրոամերիկացիների շրջանում նորածինների և մայրերի մահացություն

Սեռական ճանապարհով փոխանցվող վարկներ և բնածին սիֆիլիս

Շրջակա միջավայրի հարցերում արդարադատություն

Բռնության կանխարգելում

(Armenian)

Արդարությունը՝ որպես հիմք

Արդար առողջապահությունը դառնում է իրականություն, երբ յուրաքանչյուրն ունենում է անկողմնակալ և արդար հնարավորություն՝ հասնելու իր լավագույն առողջությանը և բարօրությանը:

Համայնքներում արդար առողջապահության ծրագիրը (CHEIP) հիմնված է Արդարության հիմքի (Equity Framework) վրա, որը ստեղծվել է ծրագրերի և գործընթացների նախագծումը կամ կատարելագործումը ուղղորդելու համար: Ռազմավարությունները կազմակերպվում են արդարության հետևյալ առաջնահերթությունների համաձայն.

Հասանելի դարձնել առողջապահական արդարությանը վերաբերող օգտակար և ներառական տվյալներ:

Աջակցել քաղաքականության և համակարգային փոփոխություններին՝ հնարավորությունների և միջոցների արդար բաշխման համար:

Ստեղծել գործընկերություններ, որոնք իսկապես կիսում են իշխանությունը և հարգում համայնքի ինքնավարությունը:

Ամրապնդել կազմակերպության պատրաստվածությունը և կարողությունը՝ ստեղծելու արդարության մշակույթ և առաջ մղելու առողջապահական արդարությունը:

(Armenian)

Եղեք ներգրավված

CHEIP-ն առաջարկում է ընդհանուր մեկնարկային կետ ընտրված ուշադրության ոլորտների համար և ընդունում է, որ այլ կազմակերպությունների, գործակալությունների, շահագրգիռ կողմերի և համայնքի անդամների ջանքերը նույնպես նպաստում են արդարությանն ու բարելավում առողջության հետ կապված արդյունքները:

CHEIP-ի յուրաքանչյուր բաժին առաջարկում է լրացուցիչ «Համատեղ գործողություններ», որոնք կարող են ձեռնարկվել՝ աջակցելու CHEIP-ում նշված աշխատանքին կամ լրացնելու այն:

Երբ Հանրային Առողջության Վարչությունը և գործընկերները կիրառեն CHEIP-ը, մենք նախատեսում ենք ընդլայնել և թարմացնել ծրագիրը լրացուցիչ հնարավորություններով՝ առողջապահական թիրախային առաջնահերթությունների վրա միասնական ազդեցությունն ավելի մեծացնելու համար:

Թարմացումների համար այցելեք՝

http://publichealth.lacounty.gov/pie/planning/chip.htm

(Armenian)

Հայտարարություն արդյունքների մասին

Լոս Անջելեսի Շրջանի սևամորթ/աֆրոամերիկացի բոլոր մանկահասակ երեխաները և մայրերը/ծննդաբերող մարդիկ վայելում են առողջ և հաճելի ծնունդներ և բարգավաճում են երեխայի առաջին ծննդյան օրվանից հետո:

Չափելի նպատակ

Հինգ տարում 50%-ով կրճատել սպիտակամորթ և սևամորթ/աֆրոամերիկացի երեխաների շրջանում նորածինների մահացության ցուցանիշների (IMR) տարբերությունը՝ նվազեցնելով սևամորթ /աֆրոամերիկացի նորածինների մահացության ցուցանիշը:

(Armenian)

Ուշադրության ոլորտ 1. սևամորթների /աֆրոամերիկացիների շրջանում նորածինների և մայրերի մահացություն

Ռամավարություններ

Օգտակար և ամբողջական տվյալներ

Ռամավարություն 1: Մինչև 2025 թվականի հունիսը գործարկել և պահպանել հանրության համար հասանելի տվյալների վահանակ՝ մայրական և նորածինների մահացության և դրանց առնչվող տվյալներով՝ ըստ ռասայի/էթնիկ պատկանելության:

Քաղաքականության և համակարգային փոփոխություններ

Ռազմավարություն 2: Մինչև 2026 թվականի հունիսը գնահատել տնտեսական կայունացման նախաձեռնության, օրինակ՝ «Երաշխավորված եկամուտ» ծրագրի իրականացումը, որը սպասարկում է առնվազն 400 հղիների, որոնց վրա ազդում են նախածննդյան առողջապահության մեջ անհավասարությունները:

Ռազմավարություն 3: Մինչև 2027 թվականի հունիսը ընդլայնել «Աֆրոամերիկացիների շրջանում նորածինների և մայրերի մահացության (AAIMM)՝ դուլայի» ծրագիրը առնվազն երեք առողջապահական համակարգերում՝ բարելավելու տվյալ մշակույթը ընդունող և աջակցող մայրերի խնամքի հասանելիությունը:

(Armenian)

Գործընկերության ստեղծում

Ռազմավարություն 4: Մինչև 2027 թվականի հունիսը ֆինանսավորել առնվազն 10 համայնքային կազմակերպություն AAIMM Village հիմնադրամի միջոցով՝ սևամորթ հղիներին և երեխաներ ունեցող ընտանիքներին սթրեսը նվազեցնելու ծառայություններ և աջակցություն տրամադրելու համար:

(Armenian)

Կազմակերպության պատրաստվածություն և կարողություններ

Ռազմավարություն 5: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը ուժեղացնել Համայնքային գործողությունների թիմերի կարողությունները՝ բացահայտելու տեղական կարիքները, մշակելու և իրականացնելու առնվազն մեկ նոր ռազմավարություն՝ որպես արձագանք տեղական կարիքների գնահատման, որն իրականացվել է սևամորթների/աֆրոամերիկացիների շրջանում նորածինների և մայրերի մահացության անհամաչափությունը վերացնելու համար:

Ռազմավարություն 6: Մինչև 2026 թվականի հունիսը ավարտել երեքից հինգ տարվա ռազմավարական ծրագիրը՝ «Աֆրոամերիկացիների շրջանում նորածինների և մայրերի մահացության» (AAIMM-ի) ղեկավար կոմիտեում համատեղ որոշումներ կայացնելու միջոցով:

Համատեղ գործողություններ

1. Քաղաքականության և համակարգային փոփոխության պաշտպանություն

Աջակցել այն քաղաքականություններին և գործելակերպերին, որոնք առաջնահերթություն են տալիս մայրերի և նորածինների առողջության համար արդարությանը, անդրադառնում են համակարգային ռասիզմին և խտրականությանը և բարելավում են առողջապահության, բնակարաններով կայուն ապահովման և այլ աջակցությունների հասանելիությունն ու կիրառումը սևամորթ/աֆրոամերիկացի անձանց և ընտանիքների համար:

2. Ներդրում ունենալ համապարփակ ուսումնասիրությունների և տվյալների հավաքման մեջ

Ավելացնել մայրերի և նորածինների մահացության և դրանց առնչվող տվյալները՝ ըստ ռասայի և էթնիկական պատկանելության՝ ավելի լավ հասկանալու մայրերի և նորածինների առողջության արդյունքներում ռասայական անհավասարության արմատական պատճառները և ավելի լավ ճանաչելու արդյունավետ միջամտությունները՝ ձեր հաստատությունում և դրանից դուրս դրանց անդրադառնալու համար:

3. Ներգրավվել համայնքի կողմից իրականացվող առաջնահերթ գործողությունների և ծրագրերի մեջ

Համայնքների և համայնքի անդամների հետ միասին մասնակցել ռազմավարությունների և նախաձեռնությունների մշակմանը և իրականացմանը՝ աջակցելու և մեծարելու սևամորթ/աֆրոամերիկացի հղիներին և երեխա ունեցող ընտանիքներին:

4. Խթանել համայնքային ծրագրերը և սոցիալական աջակցության ծառայությունները

Խթանել, ֆինանսավորել ծրագրեր կամ աջակցել այն ծրագրերին, որոնք սևամորթ/աֆրոամերիկացի հղի կանանց և երեխա ունեցող ընտանիքների համար առաջարկում են ուսուցում (օրինակ՝ խմբակային նախածննդյան դասեր, ֆինանսական բարեկեցություն, սթրեսի կառավարման տեխնիկա, կրծքով կերակրման աջակցություն), խորհրդատվություն (հոգեկան առողջություն, սնուցում), աղբյուրներ/միջոցներ, առողջապահությունից օգտվելու հարցում օգնություն կամ սոցիալական աջակցության այլ ծառայություններ (օրինակ՝ հայրերի ներգրավվածություն):

5. Ընդլայել կազմակերպությունների վերափոխումը

Ավելացնել սևամորթների/աֆրոամերիկացիների շրջանում նորածինների և մայրական մահացության՝ որպես հանրային առողջության խնդրի մասին ուսուցումը, իրազեկությունը և այդ խնդրի տեսանելիությունը: Ժխտել պատմությունները, որոնք մեղադրում են առանձին սևամորթ /աֆրոամերիկացի կանանց. փոխարենը, նշել ռասիզմը և աշխատել փոխել համակարգերը: Աջակցել ծառայություններ մատուցող կազմակերպություններին և գործակալություններին՝ բարձրացնելու կազմակերպության պատրաստվածությունը և մեծացնելու կարողությունները՝ ավելի լավ հասկանալու և բավարարելու սևամորթ/ աֆրոամերիկացի բնակիչների յուրահատուկ կարիքներն ու փորձառությունները:

Ուշադրության ոլորտ 2. սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ և բնածին սիֆիլիս

Հայտարարություն արդյունքների մասին

Լոս Անջելեսի Շրջանում բոլորը՝ ներառյալ ապագա սերունդները, պաշտպանված են սեռական ճանապարհով փոխանցվող վարակներից և բնածին սիֆիլիսից:

Չափելի նպատակ

Առաջնային և երկրորդային սիֆիլիսի ցուցանիշները հինգ տարվա ընթացքում կնվազեն 20%-ով աֆրոամերիկացի և լատինամերիկացի այն տղամարդկանց շրջանում, ովքեր սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ (MSM):

(Armenian)

Ռազմավարություններ

Օգտակար և ամբողջական տվյալներ

Ռազմավարություն 1: Մինչև 2024 թվականի դեկտեմբերը և դրանից հետո՝ շարունակաբար, պարբերաբար տարածել ՄԻԱՎ-ի և սեռավարակների (սեռական ճանապարհով փոխանցվող վարակների) վերաբերյալ արդի, օգտագործողի համար հարմար տվյալներ՝ ապահովելով հասանելիություն և ինտերակտիվություն՝ համայնքը հզորացնելու և իրազեկելու համար:

Քաղաքականության և համակարգային փոփոխություններ

Ռազմավարություն 2: Մինչև 2027 թվականի դեկտեմբերը բարելավել Կալիֆորնիայի օրենքների և Լոս Անջելեսի Շրջանի ուղեցույցների պահպանումը, որոնք պահանջում են սիֆիլիսը հայտնավերելու համար բոլոր հղիների զննում նախածննդյան սկզբնական այցի ընթացքում՝ լրացուցիչ զննումներ առաջարկելով երրորդ եռամսյակում (28-32 շաբաթ) և ծննդաբերության ժամանակ:

Ռազմավարություն 3: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը բարձրացնել սեռավարակների զննման և թեստավորման ցուցանիշները՝ ուժեղացնելով սեռավարակների մասին համայնքի իրազեկությունը և ըմբռնումը այն բնակչությունների շրջանում, որոնց համար սեռավարակների վտանգն ավելի մեծ է:

(Armenian)

Գործընկերության ստեղծում

Ռազմավարություն 4: Մինչև 2025 թվականի հունվարը ստեղծել գործընկերության խորհուրդ՝ պարբերաբար համայնքի կարծիքը և դիտողությունները խնդրելու համար՝ բացահայտելու այն գործողությունները, որոնք կբարելավեն սեռավարակների կանխարգելման և վերահսկման ջանքերը:

Կազմակերպության պատրաստվածություն և կարողություններ

Ռազմավարություն 5: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը ստեղծել համապարփակ ծրագիր՝ կանոնավոր կերպով նպատակային ուսուցում ապահովելու հանրային առողջության հետաքննիչների (PHIs), համայնքում ներգրավված հիվանդությունների միջամտության մասնագետների (CEDIS) և կլինիկաների առաջին գծի անձնակազմի համար:

Համատեղ գործողություններ

1. Ավելացնել սիֆիլիսի զննումները

Իրականացնել ռիսկային խմբերի՝ ներառյալ վերարտադրողական տարիքի և հղի կանանց սիֆիլիսի մանրակրկիտ զննում և բուժում:

2. Մեծացնել սեռավարակների մասին իրազեկությունը

Ավելացնել սեռավարակների՝ ներառյալ սիֆիլիսի մասին ուսուցումը և իրազեկությունը այն մարդկանց շրջանում, որոնք ամենամեծ վտանգի տակ են: Ներառել խարանը նվազեցնող արշավներ՝ պայքարելու սեռավարակների հետ կապակցվող խարանի դեմ, որը կարող է խոչընդոտ լինել թեստավորման, բուժման և հիվանդ լինելու մասին հայտնելու համար: Հաղորդագրություններում պետք է նշվի թեստավորումը որպես առողջապահական առօրյայի մաս ներառելու կարևորությունը:

3. Օգտագործել ընդլայնված խնամքի մոդելներ ավելի խոցելի կանանց համար

Որպես սիֆիլիսի դեմ պայքարի կարևորագույն միջամտություն՝ օգտագործել ընդլայնված մոդելներ՝ բավարարելու այն կանանց կարիքները, ովքեր ունեն հիվանդությունը ձեռք բերելու մի քանի մարտահրավերներ, օրինակ՝ թմրամիջոցների օգտագործում և անօթևանություն:

(Armenian)

4. Ամրապնդել կազմակերպության պատրաստվածությունը՝ ապահովելու տվյալ մշակույթին համապատասխան խնամք

Ավելացնել աշխատուժի կարողությունները՝ ապահովելու համար տվյալ մշակույթին համապատասխան և տվյալ լեզվին պատշաճ սեռավարակների կանխարգելում: Անդրադառնալ լեզվական խոչընդոտներին, մշակութային նորմերին և սոցիալ-տնտեսական գործոններին, որոնք կարող են ազդել խնամքի և առողջության արդյունքների հասանելիության վրա:

5. Պայքարել ՄԻԱՎ-ի և սեռավարակների տարածման դեմ

Իրականացնել սեռական առողջության դաստիարակության դասընթացներ կամ արշավներ, դառնալ պահպանակներ բաշխող կետ և ակտիվորեն աշխատել՝ կրոնական կազմակերպություններում, քաղաքներում, տեղական կազմակերպություններում և ձեռնարկություններում վերացնելու խարանն ու խտրականությունը այն անհատների և համայնքների նկատմամբ, որոնց համար ՄԻԱՎ-ի և սեռավարակների վտանգը մեծ է: Տեղական համայնքային գործակալությունները և մատակարարները կարող են ՄԻԱՎ-ի և սեռավարակների բարձր ռիսկային խմբում գտնվող բնակչության համար ապահովել և հեշտացնել կանխարգելման ծրագրերի, թեստավորման և բուժման ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև աջակցել զուգընկերների համար ծառայություններին (օրինակ՝ զուգընկերների բացահայտում և ծանուցում):

Հայտարարություն արդյունքների մասին

Նրանք, ովքեր ապրում են Լոս Անջելեսի Շրջանի ամենաաղտոտված համայնքներում, վայելում են առողջ կյանք՝ պաշտպանված թունավոր նյութերի ազդեցություններից և կլիմայի փոփոխության բացասական հետևանքներից:

Չափելի նպատակ

Հինգ տարվա ընթացքում գտնել և շտկել կապարի հետ շփման աղբյուրները այն երեխաների առնվազն 25%-ի համար, որոնք ունեն արյան մեջ կապարի 3,5 մկգ/դլ կամ ավել քանակ և ապրում են Լոս Անջելեսի Շրջանի ամենաաղտոտված համայնքներում:

(Armenian)

Ուշադրության ոլորտ 3. շրջակա միջավայրի հարցերում արդարադատություն



Ռազմավարություններ

Օգտակար և ամբողջական տվյալներ

Ռազմավարություն 1: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը հանրությանը հասանելի հարթակում հրապարակել տվյալներ շրջակա միջավայրի, կլիմայի և հարակից առողջապահական պայմանների մասին՝ հիմնված ռազմավարական ծրագրման շահագրգիռ կողմերի տեղեկությունների վրա:

Ռազմավարություն 2: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը և դրանից հետո՝ ամեն տարի, ապահովել, որ Շրջակա միջավայրի հարցերում արդարադատության և կլիմայով Պայմանավորված առողջապահության գրասենյակի (OEJCH) ծրագրի կայքէջը հանրությանը տրամադրի արդի, համապատասխան տեղեկատվություն՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որը հավաքվել է ռազմավարական ծրագրման շահագրգիռ կողմերի ներգրավվածության արդյունքում:

(Armenian)

Քաղաքականության և համակարգային փոփոխություններ

Ռազմավարություն 3: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը մշակել քաղաքականության նախնական ծրագիր շրջակա միջավայրի հարցերում արդարադատության և կլիմայով պայմանավորված առողջության առաջնահերթ խնդիրների վերաբերյալ, որը սահմանում է առնվազն 3 քաղաքականություն, որը պետք է իրականացվի:

Կազմակերպության պատրաստվածություն և կարողություններ

Ռազմավարություն 7: Մինչև 2027 թվականի հունվարը իրականացնել համագործակցությամբ մշակված OEJCH-ի ռազմավարական ծրագիրը՝ նվազեցնելու շրջակա միջավայրի ազդեցության պատճառով առողջության մեջ անհավասարությունները այն համայնքներում, որտեղ աղտոտվածությունը և կլիմայի ազդեցությունը չափից ավելի են:

Գործընկերության ստեղծում

Ռազմավարություն 4: Մինչև 2027 թվականի դեկտեմբերը Լոս Անջելեսի Շրջանի 2000 տներում նվազեցնել կապար պարունակող ներկերից թունավորվելու վտանգը՝ վերացնելով կապար պարունակող ներկերի վտանգները:

Ռազմավարություն 5: Մինչև 2025 թվականի դեկտեմբերը և դրանից հետո՝ ամեն տարի, կազմակերպել դասընթացներ և մշակել քարտեզներ առողջապահական գերտեղական թիմերի՝ Հանրային Առողջության Համայնքային Թիմերից (CPHTs) յուրաքանչյուրի համար, որպեսզի սկզբնական փորձնական ծրագրի համայնքներում ձևավորվեն գիտելիքներ և իրազեկություն տեղական շրջակա միջավայրի և կլիմայի հարցերում արդարադատության խնդիրների վերաբերյալ:

Ռազմավարություն 6: Մինչև 2026 թվականի հունիսը համագործակցել Լոս Անջելեսի Շրջանի շրջակա միջավայրի հարցերում արդարադատության և կլիմայի հետ կապված առողջության կազմակերպությունների հետ՝ աջակցելու և ստեղծելու տարածքներ շրջակա միջավայրի հարցերում արդարադատության և կլիմայով պայմանավորված առողջության թեմաներով գիտաժողովների համար:

(Armenian)

Համատեղ գործողություններ

1. Նպաստել տվյալների հավաքմանը և մշտադիտարկմանը

Տրամադրել տվյալներ՝ հասկանալու համար շրջակա միջավայրի այն պայմանները, որոնք բացասաբար են ազդում Լոս Անջելեսի Ծրջանի համայնքների առողջության վրա, ինչպես նաև առողջության բարելավմանն ուղղված միջամտությունների արդյունավետությունը:

2. Ակտիվորեն մասնակցել քաղաքականության մշակմանը, իրականացմանը և կիրարկմանը

Համագործակցել շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ, այդ թվում՝ քաղաքականություն մշակողների, կարգավորող գործակալությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների և բնակիչների հետ՝ շրջակա միջավայրի հարցերում արդարադատության և կլիմայով պայմանավորված առողջության հետազոտություններն ուղղելու քաղաքականության իմաստալից փոփոխությանը: Գտնել «շրջակա միջավայրի հարցերում արդարադատության» համայնքները և դրանց վրա կենտրոնացնել քաղաքականությանը վերաբերող աշխատանքները՝ բոլոր մակարդակներում: Պաշտպանել այն քաղաքականությունները, որոնք անդրադառնում են առաջնագծում գտնվող համայնքների պայմաններին՝ ներառյալ շրջակա միջավայրի կուտակվող աղտոտվածությանը: Պաշտպանել այն քաղաքականությունները, որոնք նպաստում են լավ առողջությանը՝ պաշտպանելով խոցելի բնակչությանը այն աղտոտող նյութերի ազդեցությունից, որոնք առաջացնում են առողջության մեջ անհավասարություն, և/կամ նվազեցնելով դրանց հետ շփումը:

3. Ներգրավվել համայնքի կողմից իրականացվող առաջնահերթ գործողությունների և ծրագրերի մեջ

Հզորացնել համայնքները և բնակիչներին՝ ակտիվորեն համագործակցելով նրանց հետ ռազմավարությունները մշակելու, առաջնահերթությունները որոշելու և իրականացնելու հարցում, ինչպես նաև շրջակա միջավայրի հարցերում արդարադատությանը և կլիմայով պայմանավորված առողջությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացներում:

4.Զարգացնել համայնքի կարողությունները՝ շրջակա միջավայրի տեղական պայմաններին անդրադառնալու համար

Անհամաչափ տուժած համայնքներին կրթել այն կուտակվող ազդեցությունների, հողօգտագործման և որոշումների կայացման այլ գործընթացների հարցերում, որոնք շարունակական են դարձնում աղտոտման բազմաթիվ աղբյուրների ազդեցությունը «շրջակա միջավայրի հարցերում արդարադատության» համայնքներում:

Ուշադրության ոլորտ 4. բռնության կանխարգելում



Հայտարարություն արդյունքների մասին

Լոս Անջելեսի Շրջանում բոլոր ընտանիքներն ու համայնքներն ապրում են բռնությունից հեռու և բարգավաճում են խաղաղ մշակույթի մեջ:

Չափելի նպատակներ

1. Հինգ տարվա ընթացքում 20%-ով կրճատել աֆրոամերիկացիների շրջանում սպանությունների ցուցանիշների և Լոս Անջելեսի Շրջանում սպանությունների միջին ցուցանիշների տարբերությունը:

2. Հինգ տարվա ընթացքում 10%-ով կրճատել չափահաս կանանց և գենդերային տարբեր/ընդլայնված ինքնություն ունեցող այն մարդկանց թիվը, ովքեր հայտնում են, որ երբևէ ֆիզիկական բռնության են ենթարկվել զուգընկերոջ կողմից:

(Armenian)

Ռազմավարություններ

Օգտակար և ամբողջական տվյալներ

Ռազմավարություն 1: Մինչև 2025 թվականի հունիսը ստեղծել բաց տվյալների կենտրոնացված հարթակ՝ Բռնությունների կանխարգելման գրասենյակի ռազմավարական ծրագրի նպատակների և մտադրությունների առաջընթացը գնահատելու չափորոշիչներով:

Քաղաքականության և համակարգային փոփոխություններ

Ռազմավարություն 2: Մինչև 2026 թվականի հունվարը ստեղծել Սեռական ոտնձգությունների հարցերով խորհուրդ՝ սեռական բռնությունից տուժածների համար ծառայությունները բարելավելու և կանխարգելման ծրագրերում ներդրումներ կատարելու նպատակով շրջանային համակարգերի և ծառայություններ մատուցողների աշխատանքների համակարգումը բարելավելու համար:

Գործընկերության ստեղծում

Ռազմավարություն 3: Մինչև 2026 թվականի հուլիսը միջգերատեսչական համագործակցությունն ամրապնդելու միջոցով ընդլայնել նախաձեռնություններն ու ծառայությունները՝ անդրադառնալու կյանքի տարբեր փուլերում գենդերային բռնությանը:

Ռազմավարություն 4: Մինչև 2027 թվականի հունիսը «Տրավմայի կանխարգելման» ծրագրի (TPI) միջոցով ընդլայնել հանրության անվտանգությանն ուղղված՝ տեղերում հիմնված համայնքների կողմից իրականացվող միջոցառումները՝ ներառելով «Փողոցում իրազեկման և համայնքներում բռնության միջամտությունը» (CVI), «Հիվանդանոցներում բռնության միջամտությունը» (HVIP) և «Համայնքային գործողություն հանուն խաղաղության» ցանցերը հետևյալ միջոցներով՝ 1) ավելացնել ներդրումները ինը համայնքներում և 2) ստեղծել ենթակառուցվածքներ բռնության միջամտության համար ընկեր-աշխատակիցների (peer) ուսուցման և Շրջանի ծառայությունների հետ համապատասխանեցման համար:

Ռազմավարություն 5: Մինչև 2025 թվականի հունիսը կիրառել համապարփակ ծրագիր՝ խթանելու հրազենի անվտանգությունը համայնքները կրթելու և իրազեկելու, քաղաքականության փոփոխության և ընկեր-աշխատակիցների (peer) մոտեցումների միջոցով:

(Armenian)

Կազմակերպության պատրաստվածություն և կարողություններ

Ռազմավարություն 6: Մինչև 2026 թվականի հունիսը Շրջանի վարչություններում և համայնքային գործընկեր-կազմակերպություններում կիրառել տրավմայի մասին գիտելիքների վրա հիմնված համակարգային և գործելակարգերի փոփոխություններ՝ խթանելու բուժումն ու բարեկեցությունը և աջակցելու տեղական բնակչության յուրահատուկ կարիքների հարցում:

Ռազմավարություն 7: Մինչև 2026 թվականի հունիսը մշակել հաղորդակցման համակարգված ռազմավարություն՝ խթանելու բռնության ընդհանուր ընկալումը, ինչպես նաև բռնությունը որպես հանրային խնդիր ընկալելը:

Ռազմավարություն 8: Մինչև 2025 թվականի հունիսը տեղական ջանքերը գործի դնել՝ կանխելու ինքնասպանությունները և ինքնասպանության վարքագծերը այն բնակչության շրջանում, որը ցույց է տրված, որ գտնվում է ավելի մեծ վտանգի տակ. այդ թվում են երիտասարդները, ոչ սպիտակամորթ համայնքները, վետերանները և հրազեն ունեցողները:

Համատեղ գործողություններ

1. Ներդրում ունենալ համապարփակ ուսումնասիրությունների և տվյալների հավաքման մեջ

- Գտնել և տրամադրել տվյալներ՝ վերացնելու տվյալների բացերը և խորացնելու բռնության բազմաթիվ ձևերի ըմբռնումը, ներառյալ՝ հրազենային բռնության, ինքնասպանության, ատելության վրա հիմնված բռնության, ընտանեկան բռնության, սեռական բռնության և մարդկանց թրաֆիքինգի ըմբռնումը:

- Օժանդակել որակական տվյալներ հավաքելու ջանքերին՝ ավելի խորը հասկանալու բռնության հանգամանքները և բուժման մասին տեղեկությունների վրա հիմնված ու համայնքակենտրոն գործելակարգերի ազդեցությունը, օրինակ՝ ընկեր-աշխատակիցների (peer) մոտեցումներն ու պատմությունները՝ ուժեղացնելու բռնությունից տուժածների ձայնը և օժանդակելու համայնքի վրա հիմնված մասնակցային հետազոտություններին:

(Armenian)

2. Պաշտպանել քաղաքականության և համակարգային փոփոխությունները

- Նպաստել այն քաղաքականություններին և գործելակարգերին, որոնք առաջ են մղում տրավմայի մասին տեղեկությունների վրա հիմնված մոտեցումներ, ապաքինող գործողություններ և նվազեցնում են ռասիզմի և կողմնակալության տարրերը. նաև կիրառել այսպիսի քաղաքականությունները և գործելակարգերը: Բացի այդ, աջակցել այն գործընթացներին, որոնց դեպքում վերապրածները և համայնքի անդամները՝ ներառյալ երիտասարդները, կարող են տեղեկացնել նման քաղաքականության և գործելակարգերի մշակման մասին և մասնակցել մշակմանը:

- Արդարությունը բարելավելուն նպաստելու համար աջակցել այն քաղաքականություններին և գործելակարգերին, որոնք ավելի մատչելի են դարձնում համայնքային կազմակերպությունների ֆինանսավորումը՝ ներառելով պետական ֆինանսական գործակալությունների հետ համագործակցումը, պայմանագրային պահանջների հստակեցումը և պարզեցումը, շրջանի ապահովագրության պահանջների ուսումնասիրումը՝ ի լրումն տեխնիկական աջակցության այն ծրագրերի ֆինանսավորման, որոնք ձևավորում են տեղական կազմակերպությունների կարողությունները:

Համատեղ գործողություններ

3. Ներգրավվել համայնքների կողմից իրականացվող ծրագրերում և առաջնահերթ գործողություններում և աջակցել դրանց

- Աջակցել այնպիսի ծրագրերի զարգացմանը, ինչպիսիք են ամբողջական և տվյալ մշակույթին համապատասխան երիտասարդական կենտրոնները, որոնք առաջարկում են միջոցներ և ծառայություններ, ձևավորում են երիտասարդների առաջնորդություն և զարգացնում են արվեստը, ապաքինումը և վերականգնողական արդարադատությունը. նաև աջակցել տրավմայի մասին տեղեկությունների վրա հիմնված համայնքային առկա նախաձեռնություններին:
- Որպես կանխարգելման տեղական ծրագրերի մաս՝ համագործակցել բռնության կանխարգելման տարածաշրջանային կոալիցիաների և «համայնքային գործողություններ հանուն խաղաղության» ցանցերի մաս կազմող համայնքային կազմակերպությունների և գործընկերների հետ՝ աջակցելու տեղական առաջնորդությանը և համագործակցությանը, ստեղծելու ընդհանուր գիտելիքներ բռնության արմատական պատճառների, հանրային առողջության մոտեցման, տրավմայի և ապաքինման, ռասիզմի և պատմական ճնշումների մասին:
- Համապատասխանեցնել այն նախաձեռնությունները, որոնք նպաստում են բռնությունից տուժած համայնքներում, ինչպես օրինակ՝ «Տրավմայի կանխարգելման ծրագրերի» համայնքներում ապաքինմանը և բարեկեցությանը՝ կազմելու ամբողջական, վայրը նկատի ունեցող մոտեցում՝ հարմարեցված յուրաքանչյուր համայնքի կարիքներին և կարողություններին: Գտնել լրացուցիչ աղբյուրներ և գործընկերություններ՝ անվճար տրամադրելու զենքի անվտանգության փականներ ամբողջ Շրջանում:

(Armenian)

4. Ներդրում ունենալ կազմակերպության փոխակերպան նախաձեռնությունների մեջ

- Ներդրումներ կատարել տրավմայի մասին տեղեկությունների վրա հիմնված համակարգերը փոփոխելու մեջ՝ ներառելով դասընթացներ բոլոր մակարդակների աշխատուժի, երիտասարդության և երիտասարդների հետ աշխատող կազմակերպությունների համար, ինչպես նաև համապատասխանեցնելով կազմակերպչական այն գործելաոճերն ու քաղաքականությունները, որոնք աջակցում են անձնակազմին, նրանց տրամադրում են միջոցներ և անդրադառնում են տուժածների հետ շփումից առաջացած (vicarious) տրավմային և կարեկցանքից առաջացած ուժասպառությանը:
- Ներդրումներ կատարել ծրագրերի և նախաձեռնությունների մեջ՝ տրամադրելով միջոցներ և առաջարկելով ճկուն ֆինանսավորում, որը թույլ է տալիս արագ արձագանքել, խրախուսում է նոր և ստեղծագործ ռազմավարությունները և վերջին սոցիալական իրավիճակներին, քաղաքական ու ֆիզիկական միջավայրին հարմարվելու կարողությունը:
- Տրամադրել միջոցներ և մշտական՝ հատուկ այդ նպատակների համար ֆինանսավորում՝ բռնության բարձր մակարդակ ունեցող համայնքերում պահպանելու և ընդլայնելու տրավմաների կենտրոնների ծրագրերը, ինչպիսիք են՝ Parks After Dark-ը («Այգիները՝ մթին»), Summer Night Lights-ը («Ամառային գիշերների լուսավորում»), Crisis Response-ը («Արձագանք ճգնաժամին»), Street Outreach-ը («Փողոցներում իրազեկում») և Hospital Violence Intervention Programs-ը (HVIPs՝ «Հիվանդանոցներում բռնության դեպքերին միջամտության ծրագրեր»):
- Ներդրումներ կատարել համակարգված հաղորդակցման քարոզարշավներում՝ աջակցելու, որ բռնությունն ընդունվի որպես հանրային առողջության խնդիր, որը կանխարգելելի է, և մշակելու ընդհանուր հաղորդագրություններ և նորարարական ուղիներ՝ բռնությունից տուժած տարբեր շահագրգիռ կողմերին ներգրավելու համար:

Փոփոխությունը պահանջում է Հանրային Առողջության Վարչության և գործընկերների միասնական կամքը և նվիրումը:

Այս ծրագրի արդյունքներին հնարավոր չէ հասնել միայնակ աշխատելով:

Հուսով ենք, որ այս ծրագիրն ապահովում է ճանապարհային քարտեզ, որը կարելի է միասնաբար գործածել նվազեցնելու համար առողջության հետ կապված անարդարությունը՝ անդրադառնալով առողջության արդյունքների անհամաչափության հիմնական պատճառներին:

Իմանալու համար, թե ինչպես համագործակցել մեզ հետ՝

http://publichealth.lacounty.gov/pie/planning/chip.htm

(Armenian)